Հավելված N 2

2024 թվականի փետրվարի 07-ին կնքված

***«ԴՏՊ-1141-11018/24» ՍՕՍԿ*** պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 4**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Միջոցառման անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-1141-11018/24» ՍՕՍԿ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | Փետրվար-դեկտեմբեր 2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | Հոկտեմբեր-Դեկտեմբեր 2024 |
| **Ներկայացման օր** | 13 Դեկտեմբեր 2024թ |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Վահե Գևորգյան, ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1. Ապահովել երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, այդ թվում՝ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայությունների տրամադրում, մասնագիտական կողմնորոշում, արտթերապիա (ծառայությունը նպաստում է երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, վեր է հանում ուժեղ և թույլ կողմերը և այլն), անձի զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում (քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և այլ խմբակների միջոցով)
2. Ապահովել սոցիալական աշխատանք ընտանիքի հետ՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով
3. Ապահովել սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ
4. Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ
5. Տրամադրել ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթ
6. Կազմակերպել երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացներ
7. Տրամադրել հնարավորություն շահառուներին՝ ծառայության որակն անանուն գնահատելու և առաջարկություններ ստանալու համար՝ արդյունքները ներառելով եռամսյակային հաշվետվություններում:
8. Տրամադրել առնվազն մեկ շահառուի անձնական օգնականի ծառայություն՝ ելնելով տվյալ երեխայի կարիքներից

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**1.** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ծրագրի շահառու հանդիսացող 3 նոր ընտանիքներում խնամվող 5 երեխաների նույնականացում և կարիքների առաջնային գնահատում: Նշյալ երեխաների ծնողների հետ ցերեկային խնամքի ծառայություններ ստանալու վերաբերյալ պայմանագրի կնքումից հետո, բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվել է կարիքների խորին գնահատում, յուրաքանչյուր երեխայի համար կազմվել է իր կարիքներին համապատասխան անհատական վերականգնողական ծրագիր և սկսվել է դրանով սահմանված ծառայությունների տրամադրումը:

Հարկ է նշել, որ կարիքների խորին գնահատման համար օգտագործվել են 2 ձևաթղթեր, մասնավորապես՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման» ձևաթուղթը, որը լրացրել են ծրագրի սոցիալական աշխատողները, իսկ երկրորդը՝ «Երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատմում» ձևաթուղթը՝ տրամադրված միասնական սոցիալական ծառայությունների կողմից, որի լրացումը կատարվել է նշյալ ծառայության սոցիալական աշխատողների հետ միասին:

Ծրագրի իրականացման չորրորդ եռամսյակի ընթացքում ծառայություններ ստացած 163 երեխաներից 3-ը եղել են Արցախից բռնի տեղահանված 1 ընտանիքից, ովքեր բնակություն են հաստատել Կոտայքի մարզի Կոտայք համայնքում:

Ծրագրի շահառու հանդիսացող 3-6 տարեկան երեխաների համար ցերեկային խնամքի ծառայությունները կազմակերպվել են ամենօրյա ռեժիմով՝ առավոտյան 10:00-ից մինչև 16:00, իսկ դպրոցահասակ երեխաների համար ծառայությունները մատուցվել են դպրոցի դասերի ավարտից անմիջապես հետո:

Ծրագրի լոգոպեդի կողմից անհատական ծառայություններ են ստացել խոսքային խնդիրներ ունեցող 42 երեխաներ: Կախված երեխայի կարիքներից՝ մասնագետի հետ հանդիպումներն իրականացվել են շաբաթական 2-3 անգամ հաճախականությամբ՝ 30-40 րոպե տևողությամբ: Ընդ որում հարկ է նշել, որ 3-6 տարեկան երեխաների հետ վերը նշյալ մասնագետը նաև իրականացրել է խմբային պարապմունքներ շաբաթական 3 անգամ հաճախականությամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 47 երեխաներ ստացել են անհատական մասնագիտական ծառայություններ ծրագրի հատուկ մանկավարժի կողմից: Կախված երեխայի կարիքներից՝ հատուկ մանկավարժի հետ հանդիպումները նույնպես իրականացվել են շաբաթական 2-3 անգամ հաճախականությամբ՝ 30-40 րոպե տևողությամբ: Ընդ որում հարկ է նշել, որ 3-6 տարեկան երեխաների հետ վերը նշյալ մասնագետը նաև իրականացրել է խմբային պարապմունքներ շաբաթական 3 անգամ հաճախականությամբ: Ի լրումն վերը նշյալ ծառայությունների՝ ծրագրի շահառու 35 երեխաներ ստացել են խմբային ծառայություններ հատուկ մանկավարժի կողմից:

Ծրագրի շահառու հանդիսացող 29 երեխաներ ստացել են հոգեբանի անհատական ծառայություններ, որոնց հաճախականությունը եղել է շաբաթական 2-3 անգամ՝ 30-40 րոպե տևողությամբ: Ինչպես ծրագրի լոգոպեդը և հատուկ մանկավարժը, ծրագրի հոգեբանը ևս իրականացրել է խմբային պարապմունքներ 3-6 տարեկան երեխաների հետ՝ շաբաթական 3 անգամ հաճախականությամբ:

Ծրագրի մանկավարժի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք դասընթացներ, հետևյալ թեմաներով՝ «Ձեռքսեղմումների նշանակությունը մարդու կյանքում որպես հմտություն», «Ի՞նչ է ճկունությունը և ինչու է այն այդքան կարևոր հմտություն մարդու կյանքում», «Ինչպես գրել ռեզյումե և դիմում», «Ինչպես առաջնորդել, առաջնորդելու հմտությունները»:
Վերը նշյալ դասընթացներին մասնակցել են ծրագրի շահառու 27 երեխաներ:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի դպրոցահասակ շահառուների համար յուրաքանչյուր ամսվա ընթացքում իրականացվել են մեդիագրագիտության զարգացմանն ուղղված մի շարք դասընթացներ, որոնց մասնակցել են 29 երեխաներ: Դասընթացների ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝ «Մեդիագրագիտություն. ի՞նչ է VPN և ինչպե՞ս օգտվել ծրագրից», «Մեդիագրագիտություն. կիբեռանվտանգության կանոնները», «Մեդիագրագիտություն. Microsoft Office հմտություններ, MS Word ծրագիր, MS Excel ծրագիր, MS PowerPoint ծրագիր», «Մեդիագրագիտություն. համակարգչային վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր»:

Հաշվետու ժամանակահատվածում 14-ից բարձր տարիք ունեցող 17 երեխաների ծնողների հետ միասին ծրագրի սոցիալական մանկավարժի կողմից իրականացվել է երեխաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված խորհրդատվություններ՝ աշխատանք փնտրելու, ինքնակենսագրություն գրելու և աշխատաշուկայում մրցակցային լինելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով երեխաների կարողություններն ու հմտությունները: Ի լրումն վերը նշյալ խորհրդատվությունների երեխաների հետ իրականացվել է նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթացներ «Աֆլաթուն» սոցիալական և ֆինանսական կրթություն ապահովող միջազգային կազմակերպության կողմից մշակված մեթոդաբանությամբ: Դասընթացների շրջանակներում երեխաների հետ կազմակերպվել է 4 արտակենտրոն այցեր «ՋԻԳԶԱԳ» ընկերության խանութ սրահ, «Մեգերյան կարպետ» գործարան, «Նոյ» կոնյակի-գինու գործարան և գեղեցկության սրահ (մասնակից 10 երեխա):

Դասընթացների նպատակն է երեխաներին օժտել շարունակական ուսուցման և կարիերայի զարգացման այնպիսի կարողություններով, որոնք նրանց հնարավորություն կտան ընտրելու աշխատաշուկայում մրցունակ մասնագիտություն և ձեռք բերելու համապատասխան աշխատանք:
Երեխաների հուզական կայունության, հասակակիցների հետ առողջ շփման և ինքնուրույնության զարգացման նպատակով ծրագրի շահառու երեխաները ներգրավվել են ցերեկային խնամքի կենտրոնում գործող տարատեսակ խմբակներում, մասնավորապես՝ հրուշակագործության, թատերական, ֆուտբոլի, նկարչության, կավագործության, ավազաթերապիայի և տիկնիկագործության խմբակներ հաճախել են 12 երեխաներ:

**2.** Հաշվետու ժամանակահատվածում պետական, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում հաջողվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար, ապահովել կրթական, առողջապահական և սոցիալական կարիքների բարելավմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես՝

- Աբովյանի 8-րդ դպրոցի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել է կրթությունից փաստացի դուրս մնացած կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մեկ երեխայի վերաքննություններ, ապահովվել է երեխայի անցումը հաջորդ դասարան և մշակվել է անհատական ուսումնական պլան 2024-2025 ուսումնական տարվա համար: Հարկ է նշել, որ դասերի մի մասն իրականացվում է հեռավար տեսակապով:
- «Գրիգոր Լուսավորիչ ԲԿ»-ի հետ համագործակցության արդյունքում 6 երեխաներ գնահատվել են մանկական հոգեբույժի կողմից, որի արդյունքում հաստատվել է երեխաների ախտորոշումը: Արդյունքում երեխաների համար մշակվել են անհատական ուսումնական պլանները և սկսվել են դրանով նախատեսված աշխատանքների իրականացումը:
- Աբովյան ԲԿ-ի հետ համագործակցության արդյունքում 1 երեխայի համար իրականացվել են համապատասխան բժշկական հետազոտությունները, որի արդյունքում նշանակվել և տրամադրվել են համապատասխան դեղորայքը: Աբովյանի ՄՍԾ-ի հետ համագործակցության արդյունքում մեկ ծնող գրանցվել է անձնական օգնականի համար նախատեսված դասընթացներին մասնակցելու և հետագայում իր երեխայի անձնական օգնականը դառնալու նպատակով:
- «Էքս էս» իմպուլս ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում 3 երեխաներ ստացել են վերականգնողական ծառայություններ: Ծառայությունների մատուցումը լինելու է շարունակական:
- Արաբկիր ԲԿ-ի հետ համագործակցության արդյունքում 7 երեխաների համար կազմակերպվել են անհրաժեշտ բժշկական հետազոտությունները և տրամադրվել է բժիշկների կողմից նշանակված համապատասխան դեղորայքը:
- «Յոլյանի անվան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն»-ի հետ համագործակցության արդյունքում 1 երեխայի համար կազմակերպվել է մանկաբույժի կողմից ցուցված հետազոտությունները, երեխան գտնվում է դիսպանսեր հսկողության տակ:

**3.** Հաշվետու ժամանակահատվածում կապ է հաստատվել շուրջօրյա խնամք տրամադրող 5 կազմակերպությունների հետ՝ ճշտելու հաստատություններում խնամվող Կոտայքի մարզից երեխաների առկայությունը: Համապատասխան համաձայնագրերի ստորագրումից հետո կազմակերպության տնօրենների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա առանձնացվել են այն բոլոր երեխաների տվյալները, որոնց, ըստ հաստատությունից ստացված տեղեկատվության, հնարավոր է վերամիավորել կենսաբանական ընտանիքների հետ: Հարկ է նշել, որ հաստատության տնօրինութան կողմից տրամադրված տեղեկատվությունը որոշ երեխաների վերաբերյալ հնացել էր, և ծնողների կոնտակտային տվյալները վավեր չէին:

**4.** Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շահառու երեխաների ծնողների հետ ծրագրի սոցիալական աշխատողների կողմից իրականացվել են առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատվություններ և ուղղորդումներ՝ ելնելով կարիքների

գնահատման արդյունքում վերհանված խնդիրների հիման վրա կազմված վերականգնողական ծրագրերից:

5. Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի կենտրոն հաճախող երեխաների տրամադրվել են սննդային փաթեթներ՝ բաղկացած սեզոնային մրգերից ու բանջարեղենից, 3 տեսակի քաղցրավենիքից, բնական հյութերից և յոգուրտներից: Սննդային փաթեթներից օգտվել են ցերեկային խնամքի կենտրոնում ծառայություններ ստացող բոլոր երեխաները:

6. Հաշվետու ժամանակահատվածում ծնողավարման հմտությունների զարգացման նպատակով ծրագրի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են խորհրդատվություններ՝ ուղղված ֆինանսական միջոցների տնօրինման առանձնահատկություններին, ինչպես նաև վարքային խնդիրներ ունեցող երեխաների ինտեգրմանը: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շահառու հանդիսացող երեխաների ծնողների համար յուրաքանչյուր ամիս իրականացվել են ծնողավարման 2 դասընթացներ՝ «Բռնությունն ու դրա կանխարգելումը» և «Դրական ծնողավարում, ծնողավարման ոճեր», «Ընտանեկան ճգնաժամերը և դրանց ազդեցությունը երեխայի հոգեկան առողջության վրա» թեմաներով, որոնց մասնակցել են 85 ծնողներ:

7. Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շահառու հանդիսացող երեխաների ծնողների համար՝ ծրագրի շրջանակներում ստացված ծառայությունների որակի գնահատման նպատակով տրամադրվել են գնահատման թերթիկներ, որոնք լրացնելուց հետո տեղադրվել են գնահատման համար առանձնացված 2 արկղերում: Եռամսյակի վերջում ծրագրի համակարգողի, հոգեբանի և սոցիալական աշխատողի կողմից կազմված հանձնաժողովի ներկայությամբ արկղերը բացվել են և իրականացվել է դրանցում ներառված գնահատման թերթիկների հաշվարկ: Արդյունքում ծառայությունների որակի գնահատմանը մասնակցել են 50 ծնողներ, որոնցից 80%-ը նշել են, որ շատ գոհ են, իսկ 20%-ը՝ որ գոհ են մատուցված ծառայությունների որակից:

8. Հաշվետու ժամանակահատվածում անձնական օգնականների համար նախատեսված վերապատրաստումներին մասնակցած մասնագետները ծառայություններ են մատուցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 3 երեխաների համար: Մասնավորապես օգնել են վարքային խնդիրներ ունեցող երեխաներին, Ցերեկային խնամքի կենտրոնում գտնվելու և հատուկ մանկավարժի, հոգեբանի ու լոգոպեդի ծառայություններից օգտվելու ընթացքում: Հարկ է նշել, որ անձնական օգնականների ներգրավվածությունը ծառայությունների մատուցման ընթացքում էականորեն հեշտացրել է վերը նշյալ մասնագետների աշխատանքը և նպաստել է արդյունավետության բարձրացմանը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է երկու իրազեկման միջոցառում՝ «Երեխաների իրավունքներ» և «Ոչ բռնությանը» թեմաներով: Իրազեկման միջոցառումները կազմակերպվել են Կոտայք գյուղի համայնքապետարանի համագործակցությամբ Կոտայք գյուղի մշակույթի տան շենքում: Իրազեկման միջոցառումներին մասնակցել են կենտրոնի շահառու երեխաները և Կոտայք, Նոր Գյուղ, Ակունք դպրոցի աշակերտները՝ ընդհանուր 80 երեխա:

Ելույթներով հանդես են եկել ՍՕՍ ՄԳ ՑԽԿ սոցիալական աշխատողը, հոգեբանը, ներքին գործերի նախարարության աշխատակիցները և համայնքային սոցիալական աշխատողը: Իրազեկման ակցիաների նպատակն է երեխաների մոտ բարձրացնել իրազեկվածությունը իրենց իրավունքների և բռնության ու դրա կանխարգելման միջոցների մասին:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում 52 ընտանիքների տրամադրվել են սննդի փաթեթներ, 45 ընտանիքների՝ հիգիենիկ փաթեթներ, 21 ընտանիքների տրամադրվել են առողջության բարելավմանն ուղղված դեղորայք, մանկական սնունդ և տակդիրներ 62 երեխաների տրամադրվել է իրենց տարիքին համապատասխան գրենական պիտույքների փաթեթներ: |

*«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ*

*ազգային տնօրեն* *Ս. Սարգսյան*